ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 04.03.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՍԵՆ ԲԵՆԻԿԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-25086-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Մարինե Ֆարմանյանի, խորհրդի անդամներ՝ Լիլիթ Ղազանչյանի, Թամարա Բաղդասարյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի, Ցոլակ Մարգարյանի, Պավել Գյուլումյանի, Դավիթ Մելքոնյանի և Արսեն Հարությունյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25086-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Վիկտորիա Հայրապետյանը **(այսուհետև՝ Դիմող կամ Բողոք բերող անձ),** դիմելով ՀՀ փաստաբանների պալատին **(այսուհետև՝ Պալատ),** խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Արսեն Մեսրոպյանին:

Արսեն Մեսրոպյանին (**այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) վերագրվել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության կատարման ընթացքի և Դիմողին հետաքրքրող հարցերին չպատասխանելու, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո գումարը չվերադարձնելու վարքագիծը:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 04.03.2026 թվականի թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1)

ենթակետերի խախտման համար:

Դիմողը Որոշման դեմ 11.05.2026թ. բողոք է ներկայացրել:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-ԿԳ-25086-2-Ա որոշման էությունը.</u>**

Հանձնաժողովը, **անդրադառնալով Փաստաբանի կողմից Դիմողին բարեխիղճ և որակյալ իրավաբանական օգնություն տրամադրման հարցին**, **Որոշմամբ նշել է հետևյալը**.

«(…) Սույն գործում առկա ապացույցներից, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի բացատրություններից պարզ է դառնում, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 2024 թվականի սեպտեմբերից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել և պաշտպանել Դիմողի շահերը ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ դատախազությունում, ՀՀ բոլոր դատարաններում և փորձագիտական հիմնարկներում՝ հանցագործության մասին հաղորդման շրջանակներում:

Այսինքն, Փաստաբանի ստանձնած պարտավորության բնույթը եղել է հստակ, որոշակի և բովանդակային. այն վերաբերվել է ոչ թե ընդամենը խորհրդատվության տրամադրմանը կամ իրավիճակի ընդհանուր դիտարկմանը, այլ կոնկրետ վարույթների շրջանակում վստահորդի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը իրավասու մարմիններում:

Մինչդեռ գործում բացակայում են ապացույցներ, որոնք կհաստատեին, որ Փաստաբանը ձեռնարկել է Պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարմանն ուղղված որևէ առարկայական իրավական գործողություն: Մասնավորապես, Փաստաբանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ այն մասին, որ նա նախաքննության փուլում ներկայացրել է միջնորդություններ, բողոքներ, դիմումներ, հարցումներ, մասնակցել է քննչական գործողությունների, պահանջել է վարույթն իրականացնող մարմնից կոնկրետ գործողությունների կատարում կամ առնվազն գրավոր կերպով ձևակերպել է վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված իրավական դիրքորոշում: Ավելին, կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանի տված բացատրությունից ևս հետևում է, որ վերջինս, փաստացի, սահմանափակվել է քննիչի հետ բանավոր կապով՝ առանց այն իրավական գործիքակազմի կիրառման, որը բխում էր ինչպես Պայմանագրի առարկայից, այնպես էլ փաստաբանի մասնագիտական պարտականություններից: Նման վարքագիծը չի կարող համարվել բավարար և պատշաճ իրավաբանական օգնություն, քանի որ բանավոր շփումը, ինքնին, առանց դրա արդյունքների իրավական ամրագրման կամ վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված կոնկրետ ընթացակարգային քայլերի, չի ապահովում հանձնարարության իրական և արդյունավետ կատարում:

Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ փաստաբանի մասնագիտական պարտականությունների գնահատման չափանիշը միայն այն չէ, թե արդյոք նա որևէ շփում կամ ներգրավվածություն ունեցել է գործով, այլ այն, թե արդյոք նրա վարքագիծը եղել է օբյեկտիվորեն պիտանի և արդյունավետ վստահորդի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այս առումով ձևական գործողությունների կատարումը, որն ըստ էության չի առաջացնում վստահորդի շահերի պաշտպանության իրական արդյունքի հասնելու ողջամիտ հնարավորություն, չի կարող դիտարկվել որպես բարեխիղճ և որակյալ իրավաբանական օգնություն:

Հետևաբար, այն պայմաններում, երբ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի ներկայացման և պաշտպանության պարտականություն մի շարք իրավասու մարմիններում, սակայն չի կատարել այդ պարտավորության բովանդակությունից բխող որևէ իրավական գործողություն, նրա վարքագիծը չի կարող գնահատվել որպես Օրենքի և Կանոնագրքի պահանջներին համապատասխան:

Այս ամենի հաշվառմամբ Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ Փաստաբանը չի ձեռնարկել այն անհրաժեշտ իրավական ու փաստացի միջոցները, որոնք տվյալ իրավիճակում կարող էին ծառայել Դիմողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը:

Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ:»

Հանձնաժողովը, **անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի** 3.6.1 **ենթակետի խախտման հարցին**, **Որոշմամբ նշել է հետևյալը**.

«(…) Հանձնաժողովը փաստում է, որ Սույն գործով արդեն արձանագրվել է, որ Փաստաբանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ վերջինս կատարել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում որևէ առարկայական գործողություն՝ ներկայացրել միջնորդություններ, բողոքներ, հարցումներ, մասնակցել քննչական գործողությունների կամ այլ կերպ գործնականում ձեռնարկել վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված միջոցներ: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից փաստացի չի ձևավորվել հանձնարարության կատարման այնպիսի ընթացք, որի վերաբերյալ հնարավոր լիներ վստահորդին պարբերաբար և բովանդակային կերպով տեղեկացնել:

Հետևաբար, վերոնշյալ հանգամանքների համակցված գնահատմամբ Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը չի կատարել նաև Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետով իր վրա դրված պարտականությունը:

Միաժամանակ, Փաստաբանը չի ներկայացրել նաև որևէ ապացույց, որը կհաստատեր, որ վերջինս Դիմողին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության կատարման ընթացքի մասին կամ պատասխանել է նրան հետաքրքրող հարցերին:»

Հանձնաժողովը, **անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի** 3.8.4 (1) **ենթակետի խախտման հարցին**, **Որոշմամբ նշել է հետևյալը**.

«(…)Սույն գործով կողմերի բացատրությունների հիման վրա Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողի ու Փաստաբանի համագործակցությունը դադարել է (ըստ էության՝ պայմանագիրը լուծվել է):

Միաժամանակ, Փաստաբանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ վերջինս ծանոթացել է գործի նյութերին և Դիմողին ներկայացրել գործի հետագա ընթացքի և հնարավոր արդյունքների վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նախատեսված է Պայմանագրի 4.3-րդ կետով: Ավելին, գործում բացակայում են նաև ապացույցներ այն մասին, որ Փաստաբանը կատարել է Պայմանագրով նախատեսված հանձնարարությունը, որի դիմաց ստացված հոնորարը ենթակա չէր վերադարձման:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերությունը նույնպես:»

Հանձնաժողովը հաշվի է առել վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «**նկատողություն**» **կարգապահական տույժը**:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Դիմողը 11.05.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է իր անհամաձայնությունը Որոշման հետ:

Դիմողն, ըստ էության անդրադարձել է նախկինում իր կողմից արտահայտած դիրքորոշումներին, մասնավորապես՝ վերջինիս պնդմամբ Փաստաբանը մեկ տարի շարունակ որևէ գործողություն չի կատարել:

Ըստ Դիմողի, Փաստաբանի միակ անելիքը ստանձնած գործի շրջանակներում եղել է իր վստահորդի շահերի ներկայացումը դատարանում, քանի որ վերջինս Հայաստանում չի գտնվել, սակայն Փաստաբանը չի ներկայացրել անհրաժեշտ միջնորդություններ, չի պատասխանել Դիմողին զանգերին և խուսափել է ակտիվ գործողությունների կատարումից:

Դիմողը, վերահաստատելով իր նախկին դիրքորոշումները խնդրել է վերնայել որոշումը և կիրառել ավելի խիստ պատիժ:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պալատի նախագահի 22.10.2025 թվականի թիվ 303-Ա/ԿԳ-25086 որոշմամբ փաստաբան Արսեն Մեսրոպյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

2. Պալատի կարգապահական հանձնաժողովը 04.03.2026 թվականի թիվ ԿԳ-25086-2-Ա որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար:

5. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** ***բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում***:

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39.10 **հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) ***նկատողություն****.*

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 **հոդվածի** 2-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը,*

մեղքի ասպիճանը, առկա փույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, կարգապահական տույժի տեսակի ընտրությունը հանդիսանում է տվյալ մարմնի օրենքով նախատեսված լիազորության դրսևորում, որի իրականացումը ենթակա է վերանայման միայն այն դեպքում, երբ ակնհայտորեն դուրս է գալիս համաչափության, ողջամտության կամ իրավաչափության սահմաններից:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության

անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Խորհուրդը գտնում է, որ համաչափության սկզբունքը պահանջում է ոչ միայն խախտման նկատմամբ արձագանքի առկայություն, այլև այնպիսի արձագանքի ընտրություն, որը համարժեք է խախտման բնույթին և ծանրությանը: Կարգապահական պատասխանատվության նպատակը չի սահմանափակվում պատժիչ ներգործությամբ և ներառում է նաև կանխարգելիչ բաղադրիչ:

Տվյալ դեպքում փաստաբան Արսեն Մեսրոպյանի նկատմամբ կիրառված «նկատողություն» կարգապահական տույժը Խորհուրդը գնահատում է որպես անհրաժեշտ և բավարար կարգապահական ներգործության միջոց՝ փաստաբանի վարքագծին իրավական գնահատական տալու, փաստաբանական համայնքում մասնագիտական վարքագծի պատշաճ չափանիշների պահպանման անհրաժեշտությունը վերահաստատելու, ինչպես նաև ապագայում նմանատիպ խախտումների կանխարգելման նպատակների ապահովման տեսանկյունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը կարգապահական տույժը կիրառելիս հաշվի է առել այն փաստը, որ Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն չի ցուցաբերել իր վստահորդին, հանձնարարության կատարման ընթացքի և Դիմողին հետաքրքրող հարցերին չի պատասխանել, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո գումարը չի վերադարձրել Դիմողին:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը, իսկ այնուհոտև՝ Խորհուրդը հաշվի են առել այն, որ թե՛ կարգապահական վարույթի շրջանակներում, թե՛ վերադասության կարգով բողոքարկման ժամանակ Դիմողը բազմիցս պնդել է, որ իր դժգոհության հիմնական պատճառը Փաստաբանի կողմից գործի ձգձգումն է եղել:

Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանի անգործության հետևանքով՝ Դիմողը չի զրկվել իր ենթադրյալ կամ իրական իրավունքների պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունից, այսինքն՝ խախտումն այդ իմաստով ծանր ու անդառնալի հետևանքներ չի առաջացրել:

Նշված հանգամանքը Խորհուրդը գնահատում է որպես պատասխանատվության անհատականացման տեսանկյունից էական նշանակություն ունեցող հանգամանք, որը տվյալ դեպքում չի արդարացնում ավելի խիստ կարգապահական ներգործության միջոցի կիրառումը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առել՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, մասնավորապես՝ Արսեն Մեսրոպյանը փաստաբան է հանդիսանում 18.03.1999թ.-ից և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

Վերոգրյալից ելնելով, Հանձնաժողովը իրավացիորեն Փաստաբանի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառել է «նկատողություն»:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից կատարվել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, պատշաճ կերպով գնահատվել են պատասխանատվության անհատականացման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, իսկ ընտրված կարգապահական տույժը գտնվել է Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակներում:

Բողոքի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի իրավական կամ փաստական հիմնավորումներ, որոնք կհաստատեն կիրառված կարգապահական տույժի ակնհայտ անհամաչափությունը կամ Հանձնաժողովի կողմից հայեցողական լիազորության սահմանների խախտումը:

Ընդ որում, Խորհուրդը նաև արձանագրում է, որ բողոքը փաստացի ուղղված է ոչ թե Հանձնաժողովի կողմից խախտման առկայության գնահատման, այլ բացառապես կիրառված տույժի խստության վերանայմանը, մինչդեռ ներկայացված բողոքում չեն մատնանշվել այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք կհիմնավորեին կիրառված կարգապահական տույժի ակնհայտ անհամաչափությունը:

Այսպիսով՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովի կողմից սույն գործով կատարվել է պատշաճ քննություն, նյութական իրավունքի նորմերը մեկնաբանվել և կիրառվել են ճիշտ կերպով, ինչի արդյունքում կատարվել են իրավաչափ եզրահանգումներ և կայացվել է իրավաչափ Որոշում, որը ներկայացված Բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 04.03.2026 թվականի «Փաստաբան Արսեն Բենիկի Մեսրոպյանի (արտոնագիր՝ թիվ 126) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25086-2-Ա որոշման դեմ Վիկտորիա Հայրապետյանի կողմից 11.05.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 04.03.2026 թվականի թիվ ԿԳ-25086-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մարինե Ֆարմանյան**

11 հունիսի 2026թ.
թիվ ԿԳ/12-Ա
ք. Երևան